Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ -ի

Edu Armenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման
դասընթաց **2022**

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ **Ուսուցչի դերի բարձրացման խնդիրը արդի հայ հասարակության մեջ**

Հետազոտող ուսուցիչ՝ Նելլի Մինասյան

Երևան-2022

Բովանդակություն

Ներածություն……...
2
Գլուխ 1. Ուսուցիչ հասկացության, նրա դերի ու գործունեության մասին. պատմական
ակնարկ……..
5
Գլուխ 2. 21-րդ դարի հայ ուսուցիչը. ինչպե՞ս դիմակայել մարտահրավերներին……10
2.1 Ուուսցիչը 21-րդ դարում. գլոբալ և լոկալ մարտահրավերներին ընդառաջ……..10
2.2 Ուսուցչի դերի բարձրացման վերաբերյալ որոշ դիտարկումներ……12
Եզրակացություն……....
15
Օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկ……..…16

Ներածություն

21-րդ դարը մի շարք կարևորագույն մարտահրավերների առջև է կանգնեցրել համաշխարհային հանրությանը: Այդ մարտահրավերները տարրաբնույթ են՝ աշխարհաքաղաքականից մինչև բնապահպանական: Սակայն առկա մարտահրավերների կարևորագույն մասն են կազմում հաջորդ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը վերաբերող խնդիրները: Այս առումով շատ կարևոր են պետությունների տեսլականները կրթության բնագավառի հետ կապված, մասնավորապես ինչ ուղղությամբ է զարգանում համաշխարհային քաղաքակրթությունը և հաջորդ սերունդը որքանով է պատրաստված ընթացող փոխակերպումների համատեքստում գործունեություն ծավալելուն: Հարկ է նշել, որ կարևորագույն խնդիր է ուսուցչական կապիտալի առկայությունը, որը կկարողանա կազմակերպել ու ապահովել հաջորդ սերնդի կրթությունն ու դաստիարակությունը:

Ինչպես ժամանակակից բոլոր հասարակությունները, այնպես էլ հայ հասարակությունը բախվել է 21-րդ դարին բնորոշ մարտահրավերներին: Այն կրթական համակարգը, որով առաջնորդվել է հայ հասարակությունը տասնամյակներ շարունակ այլևս իրեն չի արդարացնում, այն պարզ պատճառով, որ սովորողին չի տալիս անհրաժեշտ կարողունակություններ ու հմտություններ կյանքում կիրառելու համար: Սակայն սա խնդրի միայն մի կողմն է, քանզի կրթության ոլորտում որևէ գործընթաց կամ բարեփոխում կատարելու համար հարկավոր է ունենալ անհրաժեշտ գիտելիքներով ու կարողունակություններով զինված ուսուցիչներ: Այլ կերպ՝ կրթական բարեփոխումների համար անհրաժեշտ են համապատասխան ռեսուրսներ, առաջին հերթին ուսուցչական կապիտալ, որն ունակ կլինի արդյունավետ

իրականացնելու կրթական պետական չափորոշիչներով նախատեսված գործողությունները և ըստ այդըմ սերնդին ապահովելով անհրաժեշտ գիտելիքներով, հմտություններով ու կարողունակություններով:

Հայ հասարակության մեջ ուսուցիչը եղել է հարգված անհատ՝ այդ կերպարի նկատմամբ հարգանք են ունեցել հասարակության բոլոր շերտերը: Ուսուցչի մասնագիտությունը և գործունեությունը համարվել է ամենապատվելին: Սակայն 21-րդ դարում, երբ տեղի են ունենում գլոբալ փոփոխություններ, բնականաբար ուսուցչի դերն ու կերպարը ևս ենթարկվում է փոփոխության: Հայ հասարակության մեջ այդ փոփոխությունները պայմանավորված են ինչպես գլոբալ, այնպես էլ հասարակության ներսում տեղի ունեցող փոխակերպումներով: Արդյունքում ուսուցչի կերպարը զգալիորեն տուժել է, իսկ մեզանում այդ մասնագիտությունը դարձել է ոչ գրավիչ: Այս տեսանկյունից Հայաստանի Հանրապետությունում նախաձեռնված կրթական բարեփոխումներն ուղղակիորեն կապված են ուսուցչի դերի ու կերպարի հետ: Թերևս չափազանցություն չի լինի, եթե նշենք, որ բարեփոխումների արդյունավետությունը հիմնականում կախված է ուսուցչական կապիտալից: Վերոնշյալ փաստարկները պայմանավորում են թեմայի արդիականությունը և կարևորությունը: Ներկայումս ՀՀ-ում կրթական բարեփոխումների գործընթացում երկու կարևորագույն հանգամանք պետք է նկատի ունենալ՝ դպրոցը ապահովել որակյալ ուսուցչական կադրերով և բարձրացնել մանկավարժական կրթության որակը:

Հետազոտության նպատակն է ներկայացնել արդի հայ հասարակության մեջ ուսուցչի դերի բարձրացման հետ կապված մոտեցումները, ինչպես նաև փորձ է արվում ներկայացնել որոշ առաջարկներ:

Ձևակերպված նպատակին հասնելու համար առաջ ենք քաշել հետևյալ խնդիրները.

- ներկայացնել ուսուցիչ հասկացությունը և նրա դերի ու գործունեության հետ կապված փոխակերպումները հայ հասարակության շրջանում:
- վեր հանել 21-րդ դարի ուսուցչին ուղղված մարտահրավերների բնույթը:
- վերլուծել 21-րդ դարի ուսուցչին ներկայացվող պահանջներն ու բնութագրիչները:
- քննարկել և վերլուծել հայ հասարակության մեջ ուսուցչի դերը բարձրացնող խնդիրները:

Ըստ էության լավագույն ապագայի տեսլականի հիմքում դրված է դպրոցն ու կրթությունը, որի անկյունաքարն է հանդիսանում ուսուցիչը, ուստի պրոֆեսիոնալ ուսուցչական կադրերի պատրաստում պետք է պետության ռազմավարության մասը կազմի:

Ներկայացված խնդիրը արդիական է ու կարևոր, ուստի պահանջում է իրատեսական լուծումներ: Նախ՝ առաջին հերթին հարկավոր է ուշադրություն դարձնել ուսուցչական կադրեր պատրաստող հաստատությանը, այսինքն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին: Հարկավոր է քայլեր ձեռնարկել մանկավարժական համալսարանի հեղինակությունը բարձրացնելու ուղղությամբ, այլ կերպ՝ մեծացնել բուհի նկատմամբ պետական հովանավորությունն ու հոգածությունը: Մյուս կարևոր խնդիրը մանկավարժական համալսարան ընդունվող ուսանողների որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումն է, այլ կերպ՝ գրավիչ դարձնել մանկավարժի մասնագիտությունը, որի պայմաններում ավելի բարձր մակարդակի ուսանողներ կընդունվեն բուհ: Կարևոր է նաև բուհում ուսումնական ծրագրերի վերանայումը՝ այս ոլորտում արդյունավետ փորձերի կիրառմամբ: Եվ վերջապես՝ ուսուցչի մասնագիտությունը պետք է լինի ամենաբարձր վարձատրվող աշխատանքներից մեկը, որն էլ, կարծում եմ, մոտիվացիայի հիմնական աղբյուրը կլինի:

Գլուխ 1. Ուսուցիչ հասկացության, նրա դերի ու գործունեության մասին. պատմական ակնարկ

Մարդկությանը հայտնի բոլոր քաղաքակրթություններում կարևորել են եղած գիտելիքները հաջորդ սերունդներին փոխանցելու խնդիրը, ինչն էլ կազմակերպվել է կրթական/ուսուցման գործընթացի միջոցով: Ուսուցիչն է եղել այն անհատը, ում միջոցով կազմակերպվել է այս գործընթացը: Այդու՝ մի քանի խոսքով անդրադառնանք ուսուցիչ հասկացությանը, որը, ըստ էության գալիս է դարերի խորքից:

Հնագույն բոլոր ժողովուրդներն ու քաղաքակրթություններն ունեցել են իրենց ուսուցիչներին՝ կրոնական, գիտական, մշակութային: Թե՛ արևելյան, թե՛ արևմտյան հասարակությունների մեջ ուսուցիչներն արժանացել են մեծ պատվի՝ ընդհուպ մինչև սրբացվել են[1]: Ավելի ուշ հանդես են եկել մարգարեները, որոնք լայն իմաստով ուսուցիչներ էին, քանի որ մարդկությանն էին բերել Աստծո ճշմարիտ խոսքը: Այդ ուսուցիչներից էին Զարատուստրան, Բուդդան, Կոնֆուցիոսը, Քրիստոսը և Մուհամմադը, որոնք խոշոր կրոնների հիմնադիրներն են: Բացի կրոնական գործիչներից հայտնի են նաև այլ խոշոր անհատներ, որոնք իրենց կյանքը նվիրել են մանկավարժական

[1] Հին Եգիպտոսում ուսուցիչներին խոնարհվում էին իբրև աստծո՝ Թոթ, Չինաստանում նրանց անվանում էին <<սուրբ-իմաստուններ>>, հին Հունաստանում ու միջնադարյան Եվրոպայում ևս նրանց հարգում էին որպես Տրիսմեգիստ:

գործունեությանը: Այսպես՝ Պիֆագորասը եղել է բացառիկ ընդունակությունների տեր անձնավորություն՝ տիրապետել է մոգությանը, մաթեմատիկային և երաժշտությանը: Մեկ այլ հայտնի գործիչներից է հին հույն հայտնի փիլիսոփա Սոկրատեսը, ով հանուն գիտության ու գիտելիքի ընդունեց մահը, թեև կարող էր փրկվել[2]: Հետաքրքիր է, որ վերոնշյալ գործիչները գրավոր տեղեկություններ չեն թողել: Նրանց մտքերի, գաղափարների ու գործունեության մասին գրել են նրանց աշակերտներն ու համախոհները: Ավելի ուշ շրջանում ի հայտ է գալիս ուսուցչի ավելի առասպելական հասկացությունը՝ գուրու, սենսեյ, մոլլա, ուսուցիչ: Նրանք հանդիսանում էին գրքային գիտելիքների կրողներ և մեկնում էին որպես կանոն կրոնական տեքստերը: Նրանց համար գիտելիքի աղբյուր էին հանդիսանում Սուրբ գրքերը, օրինակ՝ քրիստոնեության համար՝ Հին և Նոր Կտակարանները, իսլամի համար՝ Ղուրանը, բուդդայականության համար՝ Տրիպիտական, կոնֆուցիականության համար՝ Զրույցները և դատողությունները, հրեականության համար՝ Թանախը, հինդուիզմի համար՝ վեդաները, դաոսիզմի համար՝ Դաո Դե-ցզին, զրադաշտականության համար՝ Ավեստան և այլն[3]:

Հին հայկական հասարակությունում կրթական գործի ու ուսուցչի դերի վերաբերյալ մեր ունեցած տեղեկությունները սահմանափակ են: Կարելի է ասել, որ դա առաջին հերթին պայմանավորված է քրիստոնեության ընդունումից հետո իրականացրած քաղաքականության հետ, երբ հայկական հեթանոսական մշակույթը հիմնականում վերացվեց: Հին շրջանի Հայաստանում կրթական համակարգի գոյության և դրա ձևերի մասին ցավոք ոչ մի գրավոր տեղեկություն չունենք, սակայն դատելով հարևան երկրների՝ Պարսկաստանի, Ասորեստանի, Հունաստանի և Հռոմի հետ մշակութային սերտ կապերից և փոխազդեցություններից մեր մանկավարժության պատմության մասնագետները գտնում են, որ դպրությունը մեր իրականության մեջ ունի հնագույն ավանդույթներ: Այսպես, Ց. Սիմոնյանը իր <<Հայ մանկավարժության պատմություն>> գրքում գրում է, որ Արտաշիսյան ժամանակներից Հայաստանում կային պետական աշխարհիկ դպրոցներ, որտեղ ուսուցումը տարվում էր հունական գրով: <<Չնայած դասավանդման գիրը, /երբեմն և լեզուն/ եղել է ոչ հայերենը, բայց դպրոցը եղել է հայկական: …Արշակունիների

[2] Սոկրատեսի աշակերտներից են եղել հայտնի քաղաքական ու ռազմական գործիչներ, գիտնականներ ինչպիսիք են Ալկիվիդադը, Քսենոփոնը, Պլատոնը:
[3] Ильин Г. Л., Эволюция понятия учитель, Преподаватель XXI век, 3, часть 1, 2017, с. 10.

ժամանակ /մինչ մեսրոպյան գիրը/ գործում էին ոչ հայագիր հունա-ասորական հայկական պետական դպրոցներ>>[4]:

Մեհենական դպրոցները գոյատևել են մինչև քրիստոնեության ընդունումը: Դրանց ոչնչացումից հետո Հայաստանում մեկ դար գործեցին հունագիր-հունատառ /ավելի քիչ՝ ասորագիր-ասորատառ/ ուսումնական հաստատություններ: Գրերը ստեղծելուց և Վաղարշապատ վերադառնալուց հետո Մեսրոպ Մաշտոցը առաջինը Վաղարշապատում հիմնում է դպրոց՝ ուսուցիչներ պատրաստելու համար, այսինքն առաջին բարձրագույն դպրոցը՝ վարդապետարանը: Սահակ Պարթևը զբաղվում է <<կայենական զորքերի>> ուսուցմամբ: <<Պատրաստվում էր մայրենի լեզվով կրթված երիտասարդների սերունդ, որն ավելի լավ էր գիտակցելու իր հայրենիքի ծանր վիճակը և պատրաստ էր լինելու կրծքով պաշտպանելու այն>>[5]: Մեսրոպ Մաշտոցն իր Տիրայր Խորձենացի և Մուշեղ Տարոնացի աշակերտների հետ ուղևորվում է Գողթան՝ դպրոցներ ու մենաստաններ հիմնելու: Դրանից հետո Մաշտոցն անցնում է Սյունիք, որտեղ նույնպես դպրոցներ է բացում: Մինչև օրս պահպանվել է Գողթն գավառում Մ. Մաշտոցի լուսավորական գործունեության վայրերից մեկը՝ Մեսրոպավանը կամ Մսրվանիսը, որն այսօր ևս ուխտատեղի է շրջակա գյուղերի հայ ազգաբնակչության համար: Ծուտով Մաշտոցը գործունեություն է ծավալում նաև Բյուզանդիային ենթակա Հայաստանում: Երբ գահ բարձրացավ Թեոդոսիոս Բ կայսրը /նախորդը՝ Արկադիոսը թույլ չէր տվել/, Մաշտոցը գնաց Կ. Պոլիս և անձամբ կայսեր ու պատրիարք Ատտիկոսի հետ տեսակցելուց հետո Բյուզանդական Հայաստանի դպրոցներում հայերեն ուսուցանելու պաշտոնական թույլտվություն ստացավ: Դպրոցները գտնվում էին պետության, եկեղեցու, համայնքի հոգատարության ներքո, նախատեսված էին բոլոր խավերի համար և ունեին ժողովրդի ամենաջերմ աջակցությունը: Հայաստանի երկրորդ բաժանումից հետո Բյուզանդիան ջանք չէր խնայում հայերի ուժերը ջլատելու համար, և դա ազդում էր նաև մշակույթի և դպրության վրա: Արաբական տիրապետության շրջանում նույնպես դպրությունը անկում ապրեց: 9-11-րդ դարերում դպրոցներ ստեղծվեցին Հայաստանի գրեթե բոլոր գավառներում, որոնցից շատերը դարձան ուսումնագիտական խոշոր կենտրոններ: Մատենադարանի մի ձեռագրում արտացոլված է տվյալ ժամանակաշրջանի ուսումնականների պատկերացումը

[4] Սիմոնյան Ց., Հայ մանկավարժության պատմություն, Եր., 2012, էջ 12:
[5] Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ, հ. 2, Եր., 1984, էջ 426:

ուսումնագիտական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ: Դրա համար անհրաժեշտ էին նկատվում հետևյալ 4 պայմանները. 1. վարդապետի կամքը՝ զերծ ագահությունից և փառասիրությունից, 2. ջերմ սեր ուսանողի հանդեպ, 3. խաղաղ ժամանակներ, 4. անապատ և անդորր տեղանք[6]:

12-15 դարերում դպրության զարգացումը շարունակվում էր, հանդես են գալիս խոշոր ուսումնագիտական կենտրոններ, համալսարաններ ոչ միայն Հայաստանում /Տաթև, Գլաձոր, Հաղպատ, Սանահին, Գետիկ և այլն/, այլ նաև Կիլիկիայում /Սև Լեռ, Սիս, Մեծ Քար/ և գաղթավայրերում՝ Կ. Պոլսում, Ղրիմում, Թիֆլիսում: Որպես դաստիարակության մեթոդներ աղբյուրներում նշվում են անձնական օրինակը, բարոյախոսական զրույցը, խրատը, խրախուսանքը, պարսավանքը, պատիժը /նաև մարմնական/, համոզումը և այլն[7]: Թուրք-պարսկական տիրապետության շրջանում շատ դպրոցներ վերածվել էին լոկ գրաճանաչության տարրական ուսումնարանների: Սակայն 16-րդ դարասկզբից մի քանի առաջադեմ գործիչներ կազմակերպեցին նոր և վերակազմեցին մի քանի հին դպրոցներ /Հարանց Մեծ անապատի, Ամրդոլու վանքի, Աղթամարի, Լիմի, Էջմիածնի/:

Գրատպությունը շրջադարձային էր համաշխարհային քաղաքակրթության համար: Գրքերը դարձան մասսայական՝ ստեղծվեց գիտական գրականության, ապա նաև՝ դասագրքեր: Կրթությունը ևս աստիճանաբար մասսայական բնույթ ստացավ, որին զուգահեռ հիմք դրվեց ժամանակակից ուսուցչի կերպարին, ընդ որում՝ ոչ թե կրոնական, այլ՝ աշխարհիկ: Ժամանակակից ուսուցչի կերպարը ձևավորվել է 200 տարի առաջ և ենթարկվել է մի շարք փոխակերպումների: Ուսուցչի այս կերպարի ի հայտ գալը կապված է գիտական մանկավարժության և ուսուցչի մասնագիտության հետ: Հումանիզմի գաղափարների տարածումից սկսած և հատկապես լուսավորականության շրջանում լայնորեն քննադատվում էին եկեղեցական /նաև կրթական գործով էին զբաղվում/ գործիչները և կրթական համակարգը /սխոլաստիկան/: 17-րդ դարում հայտնի մանկավարժ Յան Կոմենսկին, ով հանդիսանում է ժամանակակից դպրոցի հեղինակը, քննադատում էր միջնադարյան դպրոցը, մասնավորապես նյութի անգիր անելը՝ ֆիզիկական պատժի սպառնալիքով: Կոմենսկին առաջարկում էր ստեղծել այնպիսի դպրոց,

[6] Մատենադարան, ձեռագիր 573, թ. 39աբ:
[7] Սիմոնյան Ց., նշվ. աշխ., էջ 43:

որը կաշխատեր ժամացույցի մեխանիզմով, սակայն ակնհայտ է, որ այսօր այդ մեխանիզմն այլևս չի աշխատում[8]:

19-20-րդ դարերում մանկավարժությանը տրվեց գիտական բնույթ և աստիճանաբար ավելի խորացավ կապը գիտական հոգեբանության հետ: Այս դեպքում ուսուցիչը հանդես էր գալիս ոչ միայն առարկայի ուսուցչի/դասավանդողի դերում, այլ վերածվում է ուսուցիչ-մանկավարժի: Ըստ էության այս մոդելը պահպանվում է մինչև օրս: Այս ժամանակաշրջանում վերջնականապես ձևավորվեց դպրոցական համակարգը, ստեղծվեցին օրենսդրական ու կանոնադրական կարգավորումները, որոնք տարածվեցին նաև ուսուցիչների վրա: Այս շրջանում թեև մենք չունեինք պետություն, սակայն Հայաստանում ու գաղթօջախներում լայնորեն զարկ էր տրվում կրթական գործին: 19-րդ դարում իրենց գործունեությունն են ծավալել հայտնի մանկավարժներ, որոնք թողել են իրենց դիտարկումները ինչպես կրթական գործի այնպես էլ ուսուցչի դերի ու գործունեության վերաբերյալ: Խաչատուր Աբովյանը /1805-1848/ լուսավորության, կրթության ու մանկավարժության բնագավառում հանդիսանում է անգերազանցելի /պատահական չէ, որ նրա անունն է կրում մեր երկրում մանկավարժական համալսարանը/: Նա ծանոթ էր եվրոպական առաջադեմ կրթական համակարգին ու մանկավարժական մտքին, ուստի հայ դպոցը ևս ձգտում էր բարեփոխել այդ սկզբունքներով: Նա շատ է խոսել կրթության բարելավման մասին, նշելով այդ ոլորտում առկա բազմաթիվ խնդիրների մասին, օրինակ՝ մեթոդների ընտրության, բարոյական դաստիարակության և այլն: Ահա այս համատեքստում նա անդրադարձել է նաև ուսուցիչներին: Ըստ նրա նման բոլոր խնդիրները լուծվում են ուսուցչի ջանասիրության, նվիրվածության շնորհիվ…հետևապես նա պետք է լինի կատարյալ իր գիտելիքներով ու վարպետությամբ, անաղարտությամբ ու աշխատասիրությամբ, սիրով ու հոգատարությամբ… նրա բնորոշիչներն են՝ ազնվություն, համեստություն, համբերատարություն, շիտակություն, արդարամտություն, հաստատակամություն…[9]:

Հարկ է նշել, որ 19-20-րդ դարերում մանկավարժությունն ավելի էր վերածվում գիտության, ընդ որում թե՛ տեսական, թե՛ գործնական առումներով: Սկսում են փորձեր կատարվել՝ մեթոդների և ուսուցման գործընթացի բարելավման նպատակով, որը շարունակական գործընթաց է: Մյուս կողմից,

[8] Ильин Г. Л., նշվ. աշխ., էջ 11:
[9] Սիմոնյան Ց., նշվ. աշխ., էջ 116:

20-րդ դարից սկսած դաստիարակությունը կորցնում է իր նշանակությունը: Մանկավարժության հիմնական խնդիրը դառնում է ոչ թե դաստիարակությունը, այլ սովորեցնելը/ուսուցանելը:

Այսպիսով, պատմության ընթացքում փոխակերպումների է ենթարկվել թե՛ ուսուցիչ հասկացությունը և թե՛ նրա գործունեության բնույթը: Հայ հասարակության մեջ ուսուցչի դերը, կերպարը և գործառույթները ևս փոփոխությունների են ենթարկվել: Ըստ էության ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ մեզանում ուսուցիչ հասկացությանը տրվել է մանկավարժա-հոգեբանական բնութագիր: Մյուս կողմից, ընդհուպ մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը ուսուցիչը հայ հասարակության մեջ բարձր ու արտոնյալ դիրք ուներ:

Գլուխ 2. 21-րդ դարի հայ ուսուցիչը. ինչպե՞ս դիմակայել մարտահրավերներին

2.1 Ուսուցիչը 21-րդ դարում. գլոբալ և լոկալ մարտահրավերներին ընդառաջ

21-րդ դարը բերել է մի շարք մարտահրավերներ, որոնք թե՛ գլոբալ բնույթի են, թե՛ լոկալ: Գլոբալ մարտահրավերներին բախվում են աշխարհում բոլոր հասարակությունները և գոյություն ունեցող ինստիտուտներն ու համակարգերը, որն առաջին հերթին կապված է համաշխարհայնացման, նորարարությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետ: Արմատապես փոխվում է մարդու վերաբերմունքը շրջապատի և երևույթների նկատմամբ: Այս պայմաններում բնականաբար կրթական համակարգը մեկուսի չէ, ուստի այն ևս ենթարկվում է ազդեցությունների ու կերպափոխությունների: Բացի գլոբալ մարտահրավերներից ուսուցիչը կանգնած է նաև տեղական բնույթի մարտահրավերների առջև: Ըստ էության տեղական մարտահրավերները հիմնականում պայմանավորված են կրթական համակարգի և նրա բաղադրիչների հետ կապված պետության ու հասարակության վերաբերմունքով ու պատկերացումներով:

Գլոբալ մարտահրավերները շատ են, սակայն նշենք վերջին տարիներին տարածված համավարակը և դրա հետևանքները կրթական համակարգի վրա: Համավարակի և համընդհանուր սահմանափակումների պայմաններում, երբ կրթական գործը կարծես կանգ առավ, ուսուցչական հանրույթը կանգնեց լուրջ խնդիրների առջև. ինչպե՞ս կազմակերպել դասապրոցեսը: Դասապրոցեսը կազմակերպվեց առցանց հարթակում, սակայն սա իր հետ բերեց նոր խնդիրներ, որոնց շարքում պետք է առանձնացնել երկու հիմնականը՝ տեխնիկական հագեցվածությունը և ուսուցիչների կողմից արդի տեխնոլոգիաներին տիրապետելը: Այս պայմաններում ակնհայտ դարձավ, որ ուսուցիչը որքան էլ տիրապետի իր կողմից դասավանդվող առարկային, միևնույն է, եթե չտիրապետի տեխնոլոգիաներին, ապա արդյունք չի ունենա: Մյուս կարևոր կանոնը դառնում է այն, որ ուսուցչի գործունեության պարտադիր մասը պետք է կազմի նաև տեխնոլոգիաներին տիրապետելը: Սա, ըստ էության այն կարևոր խնդիրներից է, որ Հայաստանում ուսուցչական համայնքը դեռևս շարունակում է հաղթահարել, քանի որ դպրոցներում շարունակում են աշխատել մեծ թվով 20-րդ դարի պատկերացումներով ուսուցիչներ:

Ուսուցիչների համար պակաս կարևոր չեն նաև տեղական բնույթի մարտահրավերները: Ինչպես վերևում նշել ենք, դա առաջին հերթին կապված է հասարակության վերաբերմունքի հետ: Հարկ է փաստել, որ վերջին տասնամյակներին մեր հասարակության մեջ ուսուցչի դերն ու կերպարը

զգալիորեն տուժել է: Եթե անգամ համեմատում ենք խորհրդային շրջանի հետ, ապա տեսնում ենք ակնհայտ տարբերություններ: Բնականաբար այսպիսի վերաբերմունքի ձևավորումը պայմանավորված է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով: Կարծում ենք առաջին հերթին անհրաժեշտություն է, որ ուսուցիչը գիտակցի արդի մարտահրավերներն ու խնդիրները և ընդառաջ գնալով դրանց փորձի գտնել լուծումներ: Այս տեսանկյունից փորձենք դիտարկել մի քանի խնդիրներ: Նախ հարկավոր է հաշվի առնել, որ փոխվել է դպրոցի բնույթը: Ընդհանուր դպրոցից, որի գաղափարն էր Յ. Կոմենսկու <<բոլորին սովորեցնել ամեն ինչ>> կարգախոսը, անցում է կատարվում մասնագիտակցված դպրոց-ինստիտուտների, որտեղ սովորեցնում են միայն այն, ինչն անհրաժեշտ է մասնագիտություն ստանալու համար: Նախկինում ուսուցիչը հանդիսանում էր հիմնականում գիտելիքի աղբյուր, դպրոցական կյանքում նա իր սաների առաջնորդն էր և կրթողը, իսկ ներկայումս ուսուցիչը տալիս է տեղեկատվություն և իր սաներին ցույց տալիս, թե ինչպես օգտվել դրանից[10]: Փաստորեն ուսուցիչն այլևս գիտելիքի միակ աղբյուրը չէ: Թվային դարաշրջանում սովորողը ցանկացած տեղեկատվություն կարող է ստանալ բազմաթիվ այլ աղբյուրներից: 21-րդ դարի ուսուցչի համար կարևոր մարտահրավերներից է հանդիսանում նոր սերունդը, որն ունի նոր կարիքներ և ամենակարևորը՝ դրանց վերաբերյալ այլ, ուսուցիչներից և ծնողներից տարբեր պատկերացումներ: Ուսուցիչները/մանկավարժները պետք է ճանաչեն/իմանան, թե 21-րդ դարի սովորողները ինչը սովորելու կարիք ունեն և 21-րդ դարի սովորողները ինչպես սովորեն[11]: Նպատակն է սաներին պատրաստել գալիք մարտահրավերների համար:

Այսպիսով, ամբողջ աշխարհում ուսումնա-դաստիարակչական աշխատանքների հիմնական իրականացնողը ուսուցիչն է, հետևաբար հենց նա էլ առաջինն է բախվում ինչպես գլոբալ, այնպես էլ լոկալ մարտահրավերներին: Սա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ աշակերտները առաջինն են զգում փոփոխությունները և ըստ էության դառնում են դրանց կրողները:

2.2 Ուսուցչի դերի բարձրացման վերաբերյալ որոշ դիտարկումներ

[10] Eva Ujlakyne Szucs, The Role of Teachers in the 21st Century, Sens Public, 2009, p. 3.
[11] Lim Kam Ming & Tay Eng Guan, Preparing Teachers for the 21st Century, AsTEN Journal of Teacher Education 1 (1), 2016, p. 3.

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս իրականացվում են կրթական բարեփոխումներ, որոնց արդյունավետությունը պայմանավորված կլինի մի քանի հանգամանքներով: Որպես առաջնային և կարևոր հանգամանք/պայման պետք է նկատի ունենալ ուսուցչին: Սա նշանակում է մոտիվացնել ուսուցչին և ընդհանրապես մանկավարժի մասնագիտությունը և քայլեր ձեռնարկել հասարակության մեջ նրա դերը բարձրացնելու ուղղությամբ:

21-րդ դարի ուսուցչի բնութագրումների մեջ է մտնում ՝ նա պետք է հաշվի առնի իր աշակերտների կարիքները և նրանց պատրաստի մարտահրավերները դիմակայելուն: Ուսուցչի աշխատանքը համարվում է բարդ և պահանջկոտ: Բարձր որակի պրոֆեսիոնալ դասավանդող ուժ ստեղծելու համար կարևոր է ունենալ բարձրորակ պրոֆեսիոնալ ուսուցիչների զարգացման ծրագիր, որը պետք է ներառի տեխնոլոգիաների ինտեգրված օգտագործումը[12]:

Ուսուցչի դերի բարձրացման համար կարևոր նշանակություն ունի ուսուցչի որակավորումը/մասնագիտացումը և պրոֆեսիոնալիզմը: Հարկ է առանձնահատուկ կարևորել մանկավարժական կրթության դերն ու նշանակությունը: Այստեղ պետք է հաշվի առնել երկու հանգամանք՝ ինչ որակի ուսանողներ են ընդունվում մանկավարժական բուհ և ինչ ծրագրերով են նրանք սովորում ու պատրաստվում որպես մանկավարժներ: Մանկավարժական համալսարանն ավարտելուց հետո՝ նկատի ունենք բակալավրիատը, ուսանողը ստանում է դիպլոմ, այսինքն՝ ուսուցչի որակավորում: Սակայն այդ ուսանողը դեռևս բավականին հեռու է մանկավարժ լինելուց, թեև ՀՀ-ում մանկավարժներ պատրաստող ՀՊՄՀ-ն բակալավրիատի երկրորդ կուրսից կազմակերպում է մանկավարժական պրակտիկաներ՝ պասիվ և ակտիվ, և ըստ էության քայլեր է ձեռնարկվում հնարավորինս գործնական հմտություններով կադրեր թողարկել ուղղությամբ: Բակալավրիատի դիպլոմ ստանալը պետք է լինի առաջին քայլը, քանի որ ուսուցիչը պետք է անընդհատ ինքնակրթվի ու ինքնազարգանա՝ բարձրացնելով մասնագիտական ու մանկավարժական կարողունակությունները և հմտությունները: Ուսուցիչների մասնագիտական աճի և աշխատանքային կարիերայի ապահովման հետ կապված այսօր աշխարհում տարբերակված մոդել են առաջարկում: Ըստ դրա դիպլոմավոր ուսուցիչները պետք է սկսեն իրենց մանկավարժական գործունեությունը որպես օգնականներ: Այս աստիճանից հետո միայն կարող են

[12] Hafsah Jan, Teacher of 21st Century: Characteristics and Development, Research on Humanities and Social Sciences, Vol. 7, No. 9, 2017, p. 51.

անցնել վարպետ-ուսուցչի կարգավիճակին, երբ կտիրապետեն համապատասխան մանկավարժական հմտություններին ու կարողունակություններին, ապա՝ լիազորված ուսուցիչներ: Վարպետ-ուսուցչի գաղափարը ներկայումս ակտուալ ֆենոմեն է, թեև այդ մասին գրվել է դեռևս դարի սկզբին[13]: Վարպետ-ուսուցչի համար լրացուցիչ կարողունակությունների է հանդիսանում հետազոտություն անցկացնելը, որի հիմքում կարող է դրվել հենց նրա պրակտիկան կամ մանկավարժական գործունեության ընթացքում ձեռք բերված փորձը: Դա կարող է լինել օրինակ նոր մեթոդների և մոտեցումների կիրառումը, մանկավարժական տարաբնույթ խնդիրների համար արդյունավետ լուծումներ գտնելը և այլն: Դ. Ֆրոսթի խոսքերով <<Ուսուցչի որպես հետազոտողի գաղափարը տարիներ շարունակ ընդունվել է զգալի ոգևորությամբ: Համալսարանի կրթության բաժինները այն ընդունել են որպես նախագծային աշխատանքի հիմք, որի հիման վրա շնորհել են մագիստրոսի կոչում>>[14]: Ըստ էության Հայաստանում մանկավարժական համալսարանը ևս պետք է որդեգրի այս քաղաքականությունը: Մյուս կողմից, սա միտված կլինի ուսուցչի դերի բարձրացմանն ու կարևորմանը, որը ինչ-որ առումով նրա համար կապահովի նաև աշխատանքային աճ: Հարկ է նշել, որ ներկայումս աշխարհում տարածված է այս մոտեցումը, որի դեպքում ուսուցչական խորհուրդը ներկայացվում է հետևյալ աստիճանակարգությամբ.[15]



[13] Davidson M. What can teachers tell us that we don't know already? Education Review, 21 (2), 2009, p. 27-33.
[14] Frost D.Teachers as Champions of Innovation. Education Review, 21 (1), 2008, p. 80.
[15] Mohamed Abdul Rashid, Teacher's Professionalism: Prejudices Problems and Promises, Cice Series, 2011, p. 82.

ՀՀ-ում սկսված կրթական բարեփոխումների թերևս կարևոր արդյունքներից պետք է լինի դպրոցը անհրաժեշտ ուսուցչական կադրերով ապահովելը: 21-րդ դարի ուսուցիչը պետք է.

1. իմանա կրթության բնագավառի վերաբերյալ նորմատիվ-իրավական փաստաթղթերը:
2. իմանա իր դասավանդած առարկայի բովանդակությունը և ժամանակակից հոգեբանամանկավարժական տեխնոլոգիաները:
3. իմանա խորը գիտելիքներ մանկավարժության և տարիքային հոգեբանության վերաբերյալ:
4. կարողանա հարաբերություններ հաստատել գործընկերների, ծնողների և տարբեր կատեգորիաների սովորողների հետ:
5. զբաղվի ինքնակրթությամբ, ինքնազարգացմամբ և մասնագիտական աճով:
6. կարողանա անհատական հետագիծ ստեղծել սովորողի կրթության ժամանակ:
7. կարողանա տարբերակել տարբեր հոգեբանա-մանկավարժական տեխնոլոգիաների և կրթության ու դաստիարակության վերաբերյալ մեթոդների կիրառումը:
8. կիրառի ժամանակակից միջոցներ սովորողների առավելությունների գնահատելու համար[16]:

Փաստորեն հաջորդ սերնդին որակյալ կրթություն տալու համար կրթական համակարգում պետք է աշխատեն բարձր որակավորմամբ, կոմպետենտ, սոցիալականապես ակտիվ, ստեղծարար և գործունյա ուսուցիչներ, որոնք շարժվում են ժամանակին համընթաց:

Հայ ականավոր մանկավարժ Ղազարոս Աղայանը /1840-1911/, ով եղել է ուսուցչական բացառիկ ընդունակությունների տեր անձնավորություն, բարձր էր գնահատում ուսուցչի դերը և պահանջում մասնագիտական, մանկավարժական խորը գիտելիքներ, դասատվության վարպետություն, նորարարություն ու հնարամտություն, բարոյականային անաղարտություն: Ուսուցիչը սիրելի կարող է լինել միայն իր <<մարդավայել վարուքը>>... երբ նա է <<կատարելատիպ աշակերտաց համար>>, ապա և <<մի լինիր այնքան

[16] Антонова А. В., <<Учитель 21 века>> в свете нормативно-правовых документов в сфере образования, 2020, с. 193, http://elar.uspu.ru/bitstream/uspu/14546/1/vvi-2020-01-16.pdf (20.07.2022).

քաղցր, որ կուլ տան քեզ և ոչ այնքան դառն որ թքեն վերադ>>. ուսուցչի պատիվը բարձր պետք է պահել, թշվառ է այն <<ազգը, որ չի մեծարում և ապահովում ուսուցչին>>[17]:

Եզրակացություն

21-րդ դարը կրթության ոլորտի ու հատկապես ուսուցչի համար մի շարք նոր մարտահրավերներ է բերել: Նախ՝ առաջին հերթին փոխվել են կյանքի պայմանները, բնույթը, որոնք էլ պայմանավորել են կրթական համակարգի փոփոխությունների անհրաժեշտությունը: Մյուս կողմից, փոխվել է ուսուցչի դերի ու գործունեության մասին պատկերացումները, որը հիմնված է օբյեկտիվ, երբեմն նաև սուբյեկտիվ պայմանների վրա: Ակնհայտ է, որ 21-րդ դարի ուսուցչի առջև դրված են նոր մարտահրավերներ ու խնդիրներ, ուստի դրանցով պայմանավորված հարկավոր է քայլեր ձեռնարկել նրա դերի բարձրացման ուղղությամբ:

Հայ հասարակության մեջ դարեր շարունակ ուսուցիչը եղել է ամենապատվելի մարդկանցից/կերպարներից մեկը: Սակայն հասարակության զարգացման հետ զուգընթաց որոշակիորեն փոխվել են ուսուցչի գործառույթները և նրա դերը: Սա պայմանավորված է ինչպես հասարակական ներքին զարգացումներով, այնպես էլ մանկավարժական գիտության և մանկավարժի մասնագիտության կայացմամբ:

21-րդ դարի ուսուցչի առջև դրված են գլոբալ և լոկալ բնույթի մարտահրավերներ, որոնց լուծման համար նոր մոտեցումներ են անհրաժեշտ: Այս առումով հարկավոր է կարևորել ուսուցչի որակավորումը, մասնավորապես խոսքը վերաբերվում է հետազոտող ուսուցչի պատրաստմանը: Այս դեպքում ուսուցիչը զուտ գիտելիք տվողից վերածվում է նաև խնդիրը դիտարկողի, հետևաբար նաև լուծումներ փնտրողի: Մյուս կողմից զուտ մասնագիտական գիտելիքներ ունեցող ուսուցիչը այլևս մրցունակ չէ, քանի որ հարկավոր են նաև այլ բնութագրիչներ՝ մանկավարժական կարողունակություններ ու հմտություններ, կոմպետենտություն, ստեղծարարություն և այլն:

Արդի հայ հասարակության վերափոխման կարևոր հիմքերից է կրթությունը, որի նպատակը պետք է լինի բանիմաց ու գործնական կարողունակություններով զինված սերնդի պատրաստումը, ում համար

[17] Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հատոր Դ, Եր., 1963, էջ 93-94, 250-251:

առաջնային կիամարվի ազգային ու պետական շահը: Մյուս կողմից, պետք է արժևորել ուսուցչի մասնագիտությունը, որը պայմանավորված է երկու հանգամանքով՝ բարձրացնել մանկավարժական համալսարանի կարևորությունն ու հեղինակությունը և մոտիվացնել մանկավարժի մասնագիտությունը՝ առաջին հերթին բարձր վարձատրությամբ:

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ

Սկզբնաղբյուրներ

1. Մատենադարան, ձեռագիր 573, թ. 39աբ:

Ուսումնասիրություններ

1. Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հատոր Դ, Երևան, 1963:
2. Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ, հ. 2, Երևան, 1984:
3. Սիմոնյան Ց., Հայ մանկավարժության պատմություն, Երևան, 2012:
4. Антонова А. В., <<Учитель 21 века>> в свете нормативно-правовых документов в сфере образования, 2020, с. 185-196, http://elar.uspu.ru/bitstream/uspu/14546/1/vvi-2020-01-16.pdf (20.07.2022).
5. Ильин Г. Л., Эволюция понятия учитель, Преподаватель XXI век, 3, часть 1, 2017, с. 9-18.
6. Davidson M., What can teachers tell us that we don't know already? Education Review, 21 (2), 2009, p. 27-33.
7. Eva Ujlakyne Szucs, The Role of Teachers in the 21st Century, Sens Public, 2009, p. 3-8.
8. Frost D.Teachers as Champions of Innovation. Education Review, 21 (1), 2008, p. 13-21.
9. Hafsah Jan, Teacher of 21st Century: Characteristics and Development, Research on Humanities and Social Sciences, Vol. 7, No. 9, 2017, p. 50-54.
10. Lim Kam Ming & Tay Eng Guan, Preparing Teachers for the 21st Century, AsTEN Journal of Teacher Education 1 (1), 2016, p. 1-7.
11. Mohamed Abdul Rashid, Teacher's Professionalism: Prejudices Problems and Promises, Cice Series, 2011, p. 69-87.